ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Վ. Մ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Սարյանը տվել է մեկ քնքույշ ու գեղեցիկ երգեր, արվեստի երջանկացնող պահեր...

Ավ. Իսահակյան

Լրացավ սովետահայ ականավոր բանաստեղծ Գեղամ Սարյանի ծննդյան 60-ամյակը, մի արվեստագետի, որի ամբողջ պոեզիան հագեցած է հայ ժողովրդի պատմությամբ, նրա երեկով ու այսօրով, դարերի հողմերին դիմացած նրա սրտի երիտասարդությամբ։ Անկախ նրանից, թե ինչ ժանրի երկ է գրել ականավոր քնարերգուն՝ պոեմ, բալլադ, թե բանաստեղծություն, նրա խոսքը աչքի է ընկել մի հմայիչ «ալեկոծությամբ». մերթ դարձել է մեղմ ու կաշառող, մերթ կայծակի փայլ ստացել, մերթ էլ զուգվել արևելյան ճոխ պատկերներով։ Եվ բոլոր այդ «մակընթացությունների» մեջ Սարյանը հավատարիմ է մնացել կյանքի ճշմարտությանը։ Գտնելով իր ստեղծագործական բեղմնավոր ուղին. նա երբեք չշեղվեց սովետական գրականության զարգացման ընդհանուր ճանապարհից, սովորեց իր մեծ նախորդներից, ազդեց շատերի վրա, ստեղծեց ուրիշներից տարբերվող իր լավը, իր գեղեցիկը։ Գեղամ Սարյանը խոր ընդգրկումների բանաստեղծ է։ Նրա ստեղծագործությունը նոր մարդու վսեմ հույզերի ու ապրումների բնարական տարեգրությունն է՝ սկսած Մեծ Հոկտեմբերից մինչև մեր օրերը։ Անվանի բանաստեղծի պոեզիան վաղուց է գտնվում գրականագիտության ուշադրության կենտրոնում։ Նրա պոեզիայի մասին գրվել են սոանձին մենագրություններ, դիմանկարներ ու բազմաթիվ հոդվածներ, որոնցում ցույց են տրված, թե ինչպիսի դժվարին ու բեղմնավոր ուղի է անցել Սարյանը, ինչպես է նա կարողացել գտնել ու պահպանել իր տաղանդի ու ժամանակի միջև ստեղծված հոգևոր ներդաշնակությունը, որքանով է նրան հաջողվել արտահայտել դարաշրջանի բարոյական ու գաղափարական բովանդակությունը։

Արվեստի երկը, եթե այն իրոք տաղանդավոր է, շարունակում է մի նոր կյանքով ապրել եկող սերունդների հոգևոր աշխարհում։ Սարյանի պոեզիան հենց այդպիսին է. ժամանակի ոգուն հարազատ, ժամանակի հետ քայլող, ժամանակի հետ երիտասարդացող։

* *

1922 թ. հունիսին, մի խումբ պարսկահայ երիտասարդների հետ, Գեղամ Սարյանը եկավ Սովետական Հայաստան. եկավ սիրով, հավատով ու պայծառ երազանքներով։ Սարյանին ոչ ոք չէր ճանաչում. նա դեռ բանաստեղծ չէր, թեև նրան հայրենիք բերողը նաև բանաստեղծ դառնալու ձգտումն է եղել։ Այդ !

վկայում մինչև այսօր էլ խնամքով պահվող այն տեսարը, որի թերթիկների մաքրությանն է վստահել Սարյանը իր առաջին թոթովանքները։ Տխուր են եղել ապագա երգչի մանկությունն ու պատանեկությունը։ «Ծնված լինելով աղքատ ընտանիքում,— իր ինքնակենսագրության մեջ պատմում է Սարյանը,— իմ մանկությունն ու պատանեկությունը ասել եմ կացրել նյութական ծանր պայմաններում։ Թշվառությունը միայն մեր ընտանիքի «մենաշնորհը» չէր։ Նույն չարքաշ բախտն էր բաժին ընկել նաև պարսիկ աշխատավորին։ Այդ հանգամանքը, ինչպես նաև ֆեոդալական Պարսկաստանի ծայրաստիճան եսամնացությունը, իրավազրկությունն ու խավարամոլությունը, բնականաբար, չէին կարող խոր հետք չթողնել իմ պատանեկան հոգում»։ Սոցիալական անարդարությունները, ահավոր թշվառությունն ու աղքատությունը ցավ էին պատճառում ապագա բանաստեղծի զգայուն սրտին։ Ճիշտ է, այդ ցավը դեռևս չէր գիտակցված, բայց դա չէր խանգարում նրան տեսնելու նաև ուրիշների վիշտը, կարեկցանքով լցվելու դեպի ընչազուրկները, կյանքից հալածվածները, դեպի այն հազարավոր մարդիկ, որոնց նա հաճախ է հանդիպել հոր արհեստանոցը տանող ճանապարհին, Ամիրի քարվանսարայում։

Ամեն քայլափոխի և ամենուր պատանի Գեղամը հանդիպում էր չարի, անարդարի ասպատակություններին։ Նա մինչև այսօր էլ հարազատի ցավով է հիշում այն երիտասարդ պարսկուհիներին, որոնք շեղում էին իրենց ճանապարհը, քայլում խուլ փողոցներով, որպեսզի կարողանային գոնե մի քանի վայրկյան իջեցնել շաղրան և տեսնել աշխարհը իր բնական գույներով։ Բարբերի դաժանությամբ էր հագեցած ամեն ինչ. փողոցները, պատուհանները, աչքերը, նույնիսկ օդը։ Բարի էին Թավրիզի միայն աստղալից գիշերները, որ պատանուն հաճախ էին գերում իրենց կաթնագույն առկայծումներով, տանում նրան անհոգ, անորոշ, բայց հաճելի երազների աշխարհը, մեկ էլ՝ հոգնարեկ մոր գուրգուրանքները, որ անսպառ էին ու տաղնապալի։

«Ինձ թվում է,— գրում է Սարյանը,— թե ես բանաստեղծ դարձա այն օրից, երբ զգացի, որ մենակ ես չեմ ապրում թշվառության մեջ, որ կա մի խոր, անսահման տխրություն, որից ինձ էլ է բաժին հասել»։

Սա շատ կարևոր խոստովանություն է։ Հետագայում մենք կտեսնենք, որ Գեղամ Սարյանի պոետական խառնվածքի կարևոր, որոշիչ գիծը՝ իր ուրախություններն ու տխրությունները ընդհանուրից անբաժան տեսնելն է, այդ ընդհանուրի տեսանկյունից երևույթները դիտելն ու գնահատելը։ Իհարկե, դեռ երկար ճանապարհ պետք է անցներ նա, որպեսզի կարողանար գեղարվեստական ճշմարիտ դատավճիռ կայացնել իրականության երևույթների նկատմամբ։ Առայժմ մեզ հետաքրքրում է այն, որ պատանի Սարյանը իրեն մեկուսացած չի զգում դրսի աշխարհից, ինչ-որ ընդհանրություն է տեսնում իր և աշխատավոր մարդկանց բախտի միջև։ Թող որ այդ ընդհանրության օղակը թշվառությունն է, դրանից առաջացած վիշտը։ Կարևորը կյանքում ճիշտ կողմնորոշվելն է, այն, թե ինչ ուժերի հետ ես կապում քո ճակատագիրը։ Այսքանը դեռևս բավական չէ պոետ կոչվելու համար, բայց քաղաքացի դառնալու գլխավոր պայմանն է։

Այսպիսով, Սարյանը տեսնում է մարդկային արժանապատվության ոտնահարում, խավարի ու տգիտության մոլեգնություն, արդար վաստակով ապրող մարդկանց անլուր տառապանքներ, սովի ու կարիքի գոհ դարձած ընտանիքներ և կյանքի բոլոր բարիքները ճաշակող հարուստներ։ Այս ամենը ընտա-

կան անհրաժեշտությամբ թախծաշունչ տողեր էին դառնում և ակնածանքով հանձնվում թղթին։ Այդ տողերը նպատակ ունեին ոչ այնքան ուրիշների տառապանքները թեթևացնելու, որքան պատանու անփորձ, դեռ փխրուն սիրտը բեռնաթափելու ծանր մտորումներից։

Երբ Սարյանը առաջին անգամ ծանոթանում է Վահան Տերյանի բանաստեղծություններին, նրա առջև բացվում է մի նոր, մինչ այդ նրան անհայտ աշխարհ։ Հետագայում նրան բախտ է վիճակվում ձեռք բերել նաև Հովհ. Թումանյանի ու Ավ. Իսահակյանի գրքերը։ Հայ պոեզիայի այդ երեք մեծությունները միանգամից հափշտակում են պոետ դառնալու կրքով վառվող պատանուն, դառնում նրա գրական խորհրդատուները, խստապահանջ սիրով բացելով իրենց կախարդիչ պոեզիայի գաղտնարանները։ Գրական առաջին խոհքայլերից սեփական տաղանդի ուղղությունն անսխալ ընտրելը զգալիորեն արագացնում է պոետի ունակությունների առողջ զարգացման ընթացքը, հնարավորին չափ հեռու պահելով նրան շատ ու շատ սայթաքումներից ու մոլորություններից, գրական կենսազուրկ հոսանքների պատճառած դառնություններից։

Սարյանի վաղ շրջանի երգերում իշխողը կյանքի տխուր պատկերներն են, սիրտ մաշող ցուրտ աշնան զգացումը, տեղացող «անձրև-արցունքը», «հույսի մարող ջահերը», ապա առկայծող հավատը, որ «կգան նոր օրեր» և «հին սերերի վիշտը» կմոռացվի, այլևս հողմերի բերան չի ընկնի մարդկային վիշտը։ Այդ ամենի մասին բանաստեղծը խոսում է ոչ թե թաքուն, ինքն իր համար, այլ փորձում է դիմել աշխարհին, որ ինքն էլ ցավեր ունի, անթիվ արտունջ ու մրմունջ, ունի նաև «սիրո հույզեր ու տենչանքներ լուսեղեն»։

Իմ աշխարհն էլ վառ ծաղիկներ ունի շատ.—
Սիրո հույզեր ու տենչանքներ լուսեղեն.
Աշխարհ, ես էլ ցավեր ունեմ. որ վնատ
Ամպերի պես հոգուս մուրը կոչտեն։

Աշխարհ, ես էլ գիշեր ունեմ սևաթև,
Երբ իմ հոգին տրտունջ ունի ու հառաչ.
Գարուն ունեմ, ձմեռ ունեմ խոլարև.
Աշխարհ, ես էլ մի աշխարհ եմ քո առաջ։

Իր ուսուցիչների նման Սարյանն էլ է փորձում երգել իրականության ցոհ դարձած սերը, թախծող բնությունը, բողոքել տիրող անարդարությունների, իր սրտի մատաղ ծաղիկները տրորողների դեմ, ձգտում է լավին, գեղեցիկին, ուզում է իրականացած տեսնել իր սիրո հույզերն ու տենչանքները։ Բայց դաժան կյանքը մարում է նրա հույսի ջահերը, աշխարհի առատությունից միայն արցունք ու վիշտը բաժին թողնելով նրան։ Հակասական, իրարամերժ են հեղինակի ապրումները, նա չի կարողանում գտնել «ինչ անել»-ի ճշմարիտ պատասխանը և անվերջ դեգերում է լույսի ու խավարի խաչմերուկներում։ Զգացմունքների, խոհերի ու ապրումների այս մակընթացությունների դերիշխողը հոգի մաշող, անշոյ տրտմությունը չէ։ Բանաստեղծը հույսի, հավատի մի ինչ-որ շող ունի պահած հոգու խորքում։

Բաց, ախ, լիներ, որ հառնեիր մի օր.
Թեկուզ անհամար տարիներ անցած.
Տեսնելու համար՝ թե բոլոր, բոլոր
Հույսի ջահերից որը վառ մնաց։

Եթե այդ հույսին ավելացնենք նաև այն, որ բանաստեղծը իր ցավերին տեղյակ է պահում աշխարհին, ապա կարող ենք ասել, որ նա գիտի գլխավոր հանցավորի հասցեն։ Կանցնի ևս մի քանի տարի, և նա իր դատավճիռը կկարդա խանի ու թաջիրի երկրի նկատմամբ։ Իսկ առայժմ նա այնքան է հասկանում, որ մարդն իրավունք չունի ամպի նման անտարբեր լինել հողմի նկատմամբ, չիմանալ, թե ուր և ինչի համար է թափում իր արցունքը։ Այդքանը, իհարկե, դեռևս հեռու է անարդարության դեմ ակտիվ պայքարի կոչ դառնալուց։ Բայց որ վշտի, թախծի այդ ուղին վաղը բերելու է պայքարի կոչի գիտակման, կասկածից վեր է։ Եվ պոետական այդ վաղը բացվում է Սովետական Հայաստանում։ Այստեղ է նա խորապես հասկանում, թե ինչ ասել է ազատություն ու երջանկություն և ինչպես պետք է պայքարել հին աշխարհի դեմ։

Երբ խավարից միանգամից լույսն ես ընկնում, մի պահ չես կարողանում ամբողջական, հստակ պատկերացում կազմել շրջապատի մասին, չես կարողանում կենտրոնանալ որևէ կոնկրետ իրի, երևույթի վրա, ուշադրությունդ գրվում է ամեն ինչ տեսնելու, ամեն ինչով հիանալու անհագ կարոտից։ Նման բարդ ու հետաքրքիր հոգեվիճակ ապրեց նաև երիտասարդ Սարյանը, երբ առաջին անգամ ոտք դրեց հայրենի հողին։ Նրա համար ամեն ինչ նոր էր, անսովոր. կյանքը, մարդիկ, աշխատանքը, մարդկային փոխհարաբերությունները։ Ընդամենը երկու տարի առաջ շահագործման ու վայրենի կամայականությունների լուծը թոթափած հայ ժողովուրդը դարձել էր իր բախտի տերը։ Ամենուր լսվում էին խորտակվող հնի հառաչանքները և վեր բարձրացող նորի հաղթական կանչերը։ Ամբողջ ժողովուրդը, փոքրից մինչև մեծը, դարձել էր խանդավառ շինարար։ Սարյանը տեսավ իր ազատագրված ժողովրդի նոր կյանքի ռոմանտիկան, որդիաբար հպարտացավ վեր ձգվող յուրաքանչյուր շենքով, հրճվեց հատիկների առատությունից կորացած հասկերով, ունկնդրեց գաշտերի ծարավը հագեցնող նոր առուները գարկաչին։ Գրական ու գաղափարական վերածնման մի ամբողջ պրոցես ապրեց բանաստեղծը մինչև համոզվեց, որ արդեն կարող է ճշմարտացի խոսք ասել Հայրենիքում տեսածի ու ապրածի մասին։ Առաջին երկը «Շիրակի հարսանիքը» պոեմն էր, որը նշանակալից էր թեմատիկ շրջադարձի առումով. 20-ական թվականներին թեմատիկայի հարցերը շատ սուր էին դրված. այդ սրությունը օրակարգից չհանվեց նաև հետագա տարիներին։ Տեսնել նորը, երբ հին կատաղորեն դեռ մաքառում էր վերադարձնելու իր կորցրած դիրքերը, պահպանելու իր բարոյական նորմաները կենցաղում, մարդկային փոխհարաբերություններում, երբ թշնամին «ներսից ու դրսից» անկում էր կարդում նորաստեղծ երիտասարդ ռևսպուբլիկային. այս, այդ ամենի կողքին տեսնել նորը, հավատալ նրա ուժին ու կամքին, նրա մեծ դալիքին, իսկական տաղանդի հատկություններից է։ Հեքիաթը մի այլ, ոչ պակաս կարևոր նշանակություն էլ ունեցավ երիտասարդ բանաստեղծի համար. նա ճիշտ էր հասկացել իր տաղանդի կոչումը։ Բրականությունը բանաստեղծորեն վերարտադրելու համար,—ասել է Բելինսկին,—միայն բնական տաղանդ ունենալը քիչ է, հարկավոր է նաև, որ գրական ձևքի տակ բանաստեղծական իրականություն լինի։ Սարյանը տեսավ այդ նոր իրականությունը և իր պոետական բախտը կապեց նրա հետ։ Նա ընտրեց արվեստի ամենադժվարին ուղին՝ հերոսական աշխատանքի մեջ տեսնել մարդուն, ապրել նրա կյանքի բոլոր մակընթացություններով և մնալ նրա հետ, հավասարապես կիսելով բոլոր ուրախություններն ու դառնությունները։ Այդ առաջ-

մով անհիմն պետք է համարել այն կարծիքը, թե Սարյանը ստեղծագործական ցավեր չի ունեցել, թե հարթ ու խաղաղ է եղել նրա դրական ճանապարհը. ոչ ինքն է վիճել ուրիշների հետ, ոչ էլ ուրիշներն են անհանգստացրել նրան։ Սարյանն, իհարկե, Չարենցի նման դրական ճակատամարտեր չի մղել, բայց նա Չարենցի կողմն էր, նրա մղած պայքարի կրքոտ մասնակիցը։ Այդ է վկայում նրա «Երկիր Խորհրդային» ժողովածուն, որ լույս տեսավ 1930 թ., Չարենցի «էպիկական լուսաբացից» մի քանի ամիս հետո և արժանացավ ընթերցող հասարակայնության բարձր գնահատականին։ Նոր ժողովածուի մեջ այլևս չկան «մորմոքող սրտեր» ու «հառաչող հոգիներ», այլ կա ծով խնդություն, հայրենիքի անմար սեր, կառուցման տենդով վառված մարդիկ։ Փոխվել է ամեն ինչ. և այդ ամենի հետ նաև ինքը՝ բանաստեղծը։

Ջրերը հորդում են, ձյունհալ է, ջան, գարուն.
Կարկաչում է առուն, սիրտ իմ, խնդա:
Այս կարկաչը, սիրտ իմ, էլ ետ չի դառնալու,
Այս կարկաչը, սիրտ իմ, էլ չես զգա:

Զրկանքներց վայրկյանը, Ու վրայով անցավ,
Ու կատարեց սահուն թռիչքն իրա,
Ու թոթափեց ահա զարկերի հետ մեկտեղ
Իր բեռածը, սիրտ իմ, նա քեզ վրա:

Դու էլ անցար, սիրտ իմ, անտրտունջ ու անձայն.
Ես էլ քեզ հետ մեկտեղ և ամեն ինչ,
Հիմա ուրիշ եմ ես, հիմա ուրիշ ես դու
Այլ է աշխարհն հիմա և ամեն ինչ...

Կարդում ես երեք տասնամյակ առաջ լույս տեսած «Քարերից երգը երգեմ», «Խորհրդային Հայաստան», «Պատմություն գրված ժայռի վրա», «Վայրկյանը բանաստեղծությունները և մի փառավոր պատմություն է հառնում քո դեմ գրված քարերով, քարերի վրա, դարերի խորքից եկած։ Սարյանի բանաստեղծական «ես»-ին խորթ են քաղքենիական նվոցները, լալկանությունն ու տրխրասիրությունը: Կյանքի, սիրո, մահվան մասին նա խոսում է, մնալով մարդկային հոգևոր արժանապատվության, մարդասիրության բարձունքներում։

Առաջին գրքի հաջողությունը թևավորեց Գեղամ Սարյանին։ Կարելի է ասել, որ 30-ական թվականները շրջադարձային կետ դարձան սովետահայ գրականության համար։ Եվ բնավ պատահական չէր, որ այդ տասնամյակում հրապարակ եկավ տաղանդավոր գրողների մի ամբողջ սերունդ, իսկ մինչ այդ քիչ թե շատ անուն ունեցողները ամուր արմատներ ձգեցին, գնացին դեպի կյանքի խորքերը, այնտեղ որոնելով իրենց տաղանդի սրբազան անհանգստությունը, իրականության վեհն ու գեղեցիկը։ Բանաստեղծի սրտի միջով է անցել ժամանակը, թողնելով նաև վերքեր։ Նրա յուրաքանչյուր խոհը, տխրությունը այդ վերքերի անմիջական արտահայտություններն են։ Բանաստեղծի այդ տրամադրությունների արտահայտությունը հանդիսացավ «Ջրպարտություն» խորագրով պիեսը, որը մի քանի անգամ բեմադրվեց Սունդուկյանի անվան թատրոնում, սակայն արգելվեց, որովհետև այնտեղ դատապարտվում էին այն դրպարտությունն ու դեմագոգիան, որ այդքան դառնություններ պատճառեցին ժողովրդին անհատի պաշտամունքի շրջանում։ Սարյանը չէր կարող ընտրել արհեստական կուրության ուղին, որովհետև նա զգում էր, որ

սև ամպեր են կուտակվել և միայն հորդ տեղատարափը կարող է պայծառություն բերել երկնքին։ Ճիշտ է, այդ տեղատարափը ուշ եկավ, բայց եկավ մարդասիրական մի անողոքությամբ, անցյալից դասեր առած, անցյալի լավի պաշտպանությամբ։

30-ական թվականներին, երբ երկիրն ու մարդիկ «երկաթ էին հագել», իսկ պատմությունը դրվել էր ռելսերի վրա, երբ քրտինքի կատարածր հավասարվեց արյունով ձեռք բերածին, սկսվեց սոցիալիստական աշխատանքի վճռական հարձակումը կյանքի բոլոր բնագավառներում, համայնական դաշտերում, գործարաններում, ընտանիքում։ Մեր հայրենիքի պատմության նոր էտապը սկզբնավորող այդ հարձակման մեջ առաջ եկան աշխատանքի զորավարներ, ծավալվեց, խորացավ ու էլ ավելի հարստացավ կյանքը, դրա հետ միասին նաև գրականությունը։ Սարյանի լիրիկական հերոսը նույնպես զարգացում ապրեց։ Երեկ նա շատ բան տեսնում էր, բայց չէր կարողանում խորանալ դեպքերի պատմա-փիլիսոփայական էության մեջ, ըմբռնել կյանքը հեղափոխականացնող աշխատանքի նշանակությունը։ Այժմ նա ավելի լրջահայաց է ու մտախոհ, տեսնում է, որ մարդն աշխատանքով է փոխում բնությունը և փոխվում աշխատանքի մեջ, և այդ ամենը ձեռք է բերվում քրտինքով, զրկանքով, արյունով։

Կբարձրանաս մի օր, կլինես խելահաս,
Ու երկիր կմտնես որպես գարուն զվարթ.
Գուցե հուզվի հոգիդ, կամ գուցե զարմանաս,
Երբ ժպտա քեզ կյանքը և պայծառ, և հպարտ։

Զմայլանքի խինդով հոգիդ կպարուրես,
Կժպտան քո դիմաց շենքերը խոյանքով.
—Ինչպե՞ս են կառուցել,—գիտեմ կհարցնես,—
Քարերը շենքերի կասեն քեզ.—քրտինքով։

Կբացվեն քո առաջ անհամար գործարան,
Ու հազար մեքենա սրտատրոփ զարկով.
—Ինչպե՞ս են կառուցել,—կհարցնես նրանց,
Ու հազար մեքենա կասեն քեզ.—զրկանքով...

Կնայես, կխորհես հոգիդ թախիծով լի
Կճանաչես նրանց կոմունար անունով.
—Ինչպե՞ս են բարձրացել,—կհարցնես էլի.
Արձանները մեկտեղ կասեն քեզ.— արյունով։

Սարյանը հարուստ ասոցիացիաների հեղինակ է։ Երբեմն շատ սովորական, նույնիսկ աննշան երևույթից նա կարողանում է «պոկվել» և ընթերցողին տանել մեծ խոհերի ճանապարհով։ Ահա «Պարտիզպանը» բանաստեղծությունը, որտեղ պատմված է այն մասին, թե ինչպես արքան, շքեղ պարտեզ մտնելով, հրամայում է (և ոչ թե խնդրում) պարտիզպանին մի ծաղիկ պոկել և տալ իրեն։ Բայց տեսեք, թե այս շատ անմեղ տեսարանին ինչ է հաջորդում.

Մթնեց ծերունու հայացքն արևկա,
Տխրեց պարտեզը հազարաշքանի.
—Ես ո՞ր ծաղիկը քաղեմ, ով արքա.
Որ կողքին բացված ծաղիկն «ախ» չանի։

(1945)

Այս բոլորովին անսպասելի անցումից հետո այլևս մոռանում ես պարտեզն ու ծաղիկները և քո հայացքի առջև ծառանում է արքան՝ իր դաժանություններով, մարդկային արյան ծարավով, նա, որի զոհն են դառնալու Գյուլնարան ու Զեյնալը, կյանքի այդ գեղեցիկ ծաղիկները, ապա դարերի խորքից եկած իմաստունի այն հավաքական կերպարն է կանգնում քո դեմ, որ ժողովուրդը ստեղծել է իր դատը պաշտպանելու համար։ Որքան իրավացի էր Նեկրասովը, ասելով. «Եթե բանաստեղծի հոգում պարզ են բարու և սիրո տիպերը, աշխարհում նրա համար բոլոր թեմաներն էլ դեղեցիկ են»։ Սարյանը հենց այդպիսի խառնվածքի պոետ է։ Նա թեմայի պակասություն չի զգում, որովհետև նա կյանքում սոսկ ականատես չէ, այլ ճշմարտության կրքոտ պաշտպան։ Ժամանակի ոգին, նրա սոցիալական զարկերակը որոշակիորեն երևում է նրա մեծ ու փոքր երգերում, անկախ նրանից, թե ինչի մասին է գրում անտառի փոքրիկ առվակի, երկաթաքարի, հենակների թե վերջալույսի։ Փոխվում են իրերը, դեպքերը, երևույթները, բայց գեղարվեստական սկզբունքները հարստանալով՝ մնում են նույնը։ Թվում է, թե որևէ կապ լինել չի կարող, ասենք «Մանուշակներ» բանաստեղծության և «Իրանի» ու «Սալաթ-Նովա» պոեմների միջև։ Մինչդեռ կա գաղափարական մի հիմնական գիծ, որ անցնում է այդ երեք գրվածքի միջով։ Բուրժուական աշխարհում չեն կարող ազատ լինել մարդկային գեղեցիկ զգացմունքները, դրանք ոտնահարվում են, վաճառվում կամ պարզապես գլխատվում։

Սարյանի պոեզիան աչքի է ընկնում խոսքի ինքնատիպ պատկերավորությամբ։ Նա ունի պատկերների իր սիստեմը, իրականության երևույթների խտացած ընդհանրացման իր սկզբունքը։ Օրինակ, նա չի սիրում երկը կառուցել առանձին հաջող պատկերի, սրամիտ խոսքի վրա։ Սարյանի բանաստեղծությունն ինքը մի ամբողջական պատկեր է, որի ստեղծմանը մասնակցում են բոլոր տողերն ու մտքերը։ Այս առումով կարելի է նույնիսկ ասել, որ Սարյանը քանդակագործ-բանաստեղծ է, նրա տողն իրոք բարեկազմ է, մկանուտ, հագեցած է կյանքի հյութերով։ Սարյանը երբեք չի ասի, թե կապիտալի աշխարհում անարդարություն է տիրում և «դեղին տիրակալի» կրնկի տակ հեծում է աշխատավոր ժողովուրդը։ Մերկապարանոց ինֆորմացիայի լեզուն խորթ է նրա պոեզիային։ Այդ ամենի փոխարեն Սարյանն ասում է.

Մորթվեց արեգակը այնտեղ, արևմուտքում
Դարերի տակ ճկուած մի լեռան ապտակին...

Եվ այդ մորթվող, մահացող արևի պատկերը բացում է մտքերի, խոհերի մի ամբողջ աշխարհ և ընթերցողը ատելությամբ է լցվում արևը (կամ՝ մարդկային կյանքը) մորթողի նկատմամբ, միաժամանակ կարեկցում այդ արնածոր արևին։ Վաղը փրկվելու է նաև այդ արևը, դառնալու է բոցաճառագ, արշալույսի ավետաբեր։ Ճիշտ են նկատել, որ Սարյանը արև շատ է սիրում, դրա համար էլ նա չի կարողանում հանդուրժել կյանքի պայծառությունը խաթարող ստվերը, անգամ ամենափոքրիկ բիծը։ Սարյանի համար արևը «հաղթող կամք է», հաղթող լրահ, ապա նաև երգման խոսք («Այս վառ արևը վկա»), «Թարթող կարմիր աչք»։ Նրա գրչի տակ մայիսը սովորական ձևով չի գալիս, այլ «ցող մարգարիտներ» ցանելով, զարնան կանաչները համբուրելով, բացվող մեխակների լուռ ժպիտով («Մայիսը»), վերջապես նրա երգած առավոտը

նաև լուսաշող մի դար է։ Դժվար չէ նկատել, որ Սարյանը բոլոր դեպքերում մարդու մասին է խոսում, նրա հոգու հարստություններն է տեսնում բնության գեղեցկությունների մեջ։ Նա մարդու դրական գծերի սիրահար է, դրանով ոգևորվող ու ոգեշնչվող։ Այս առումով նույնպես Սարյանը մեկն է այն գրողներից, որոնք «հիմք ընդունելով մեր կյանքի դրական երևույթները, այդ դրականի վրա ցույց են տալիս աշխատանքի պաթոսը, խանդավառում են մարդկանց սրտերը, նրանց առաջ են կոչում, ցույց են տալիս նոր աշխարհի ուղիները» (Ն. Խրուշչով)։

Մի առիթով Ստեփան Զորյանն ասել է, թե Սարյանի պոեզիայի համակրելի գծերից մեկն էլ լավատեսությունն է կյանքի նկատմամբ, ոչ թե էժանագին ու ցուցական մի լավատեսություն, որ ոչինչ չի ասում ընթերցողի մտքին ու սրտին, այլ ներքին, բանաստեղծի էությունից բխող, որ նույնպես համակող է ու ջերմացնող։ Ճշմարիտ գնահատական է։

Երգը, եթե հագեցած է կյանքով, հարազատ է կյանքի, դարի ոգուն, երբեք իր ստեղծողի պաշտպանության կարիքը չի զգում։ Զրկվելով արդեն իր տողերի վրա իշխելու հնարավորությունից, պոետն այլևս ապրում է իր ստեղծածի մեջ, բաժանում նրա բախտի հետագա ուրախություններն ու դառնությունները։ Սարյանը դառնություններ քիչ է կրել, որովհետև դժվարությամբ ձեռք բերված ուրախություն է երգել, կաբոզացել է ճշմարտությունն ասել ժամանակի և իր մասին։ Այդ ճշմարտությունն է արտացոլված Սարյանի նաև պարսկական բալլադներում։

Սովետական Հայաստանի կյանքը, մարդկային նոր հարաբերությունները օգնում են նրան իմաստավորելու պարսկական տպավորությունները, տեսնելու ստրկության սոցիալական արմատները։ Եվ ահա մեկը մյուսի ետևից նա գրում է «Գյուլնարա», «Թարգանի մորմոքը», «Իրանի», «Գյուլխանդա» ծավալուն երկերը։ «Գյուլնարան» պատկերում է սոցիալական խավարի զոհ դարձած պարսկուհու ըմբոստ և հմայիչ կերպարը։ Առաջին իսկ տողերից ընթերցողն զգում է խոհերի այն աշխարհը, որը հագեցած է ատելությամբ խանի ու թաջիրի երկրի դեմ, ներթափանցված է կարոտով ու ցավով Գյուլնարայի նկատմամբ։ Որքան գայծառ է պարսկուհու գործած խալին, նույնքան խավար է այն իրականությունը, որի մեջ ապրում է նա։ Դա սովորական խալի չէ, այլ լուսե երազանքներից հյուսված, ցասման ցոլքերը վրան մի կյանք, որ անհավասար կռվի է ելել ստրկության դեմ։ Գյուլնարան այլևս չի կարող անտրտունջ տանել ծանրությունն այն չադրայի, որ ծանրացել էր նրա սրտին ու հոգուն։ Եվ նա, դեն նետելով գարավոր անարգարության այդ խորհրդանիշը, ցանկանում է սեփական աչքերով տեսնել աշխարհը, մարդկանց, և ճշմարիտ կարծիք կազմել դրանց մասին։ Այդ հանդուգն քայլի համար էլ նա դատապարտվում է մահվան։ Եվ այսպես գլխատվում են մարդիկ, ոտնահարվում նրանց ազնիվ ու մաքուր զգացմունքները։ Մի տեղ Նաջիբան է մահից առաջ դեն նետում չադրան, իսկ Զեյնալին թունավորում են սիրելու համար։ Մի ուրիշ բալլադում Թարգանն է մորմոքում, որովհետև սիրածին գնել են փողով և տարել հարեմ։

Թառի առաջ սիրուս բացի.
Յարի ցավը թառն ինչ անի,
Վարդը տեսա՝ դարդրս լացի,
Վարդը աչքի ցողն ինչ անի,

Թաց աչքերս տվի բարձին,
Վախ, չոր բարձը ինձ ինչ անի,—

— Թարզան, սիրած, գյոզալ յարիդ
Հերը հացով ծախեց խանին:

Մի թառլան ուղտ չոքեց դռան,
Շեմքին ախր էն իմ սիրտն էր,
Խանի ուղտը կոխեց վրան,
Սիրտս ախր սիրով լիքն էր.
Յարս խանին խաղալիք է,
Ինձ համար նա կյանքս ինքն էր:

— Թարզան, յարիդ համար բերած
Խաս քյաչայան մահով լիքն էր:

Էյ, բաղամգյոլ չաղրան վրան
Քյաչուֆի մեջ յարս ինքն էր,
Մանգը յարիս դեղին դաֆուն՝
Աչքիս առաջ մահս ինքն էր.
Ուղտը կանգնեց՝ յարըս վրան,
Ոտների տակ, վախ, իմ սիրտն էր:

— Թարզան, սիրած, գյոզալ յարիդ
Ուղտի վրա հարեմ տարան:

Սարյանի արևելյան բալլադները, ատելություն առաջացնելով ստրկության աշխարհի նկատմամբ, միաժամանակ վեհացնում են սովետական մարդու հայրենասիրական ոգին, բարձրացնում նրա հպարտության զգացումը։ Այդ հայրենասիրությունն էլ հենց օգնել է բանաստեղծին տեսնել և ճիշտ պատկերել պարսկական կյանքի խավարը՝ իր բոլոր ահավոր կողմերով, և ըմբոստության այն առկայծումները, որ վաղը փրկության կրակներ են դառնալու։

Հոկտեմբերը, սկիզբ դնելով մարդկության նոր պատմությանը, շավարտվեց Ավրորայի համազարկերով։ Ռևոլյուցիան և նրա մարդիկ անցյալ չէին դարձել։ Երկուսն էլ գործուն, կենդանի իրականություն էին։ «Կակաչ» բանաստեղծությունը այդ մեծ իրականության մարմնավորումն է, նվիրված Մայիսյան ապստամբության հերոսներին, նրանց, որ ընկան հաղթանակի հավատի երգը շուրթերին։

Բանաստեղծը վշտի ու հպարտության զգացումով է խոսում զոհված հերոսների մասին, որովհետև նրանց թափած արյունը կոկոններ դարձած զարդարում է այսօրվա կյանքը։

Մի կարմիր կակաչ, մի սիրուն կակաչ
Ժպտաց ինձ դաշտում վառ մի առավոտ,
Կարծես իմ սրտին ծանոթ ու ճանաչ՝
Խոսեց հոգուս հետ մի կարմիր կակաչ:

— Քո ընկերոջից ընդունիր բարև,
Այ բերբերիս մեջ հայացքն է նրա,
Նրա մահով եմ սնվել, կյանք առել,
Այս կանաչ, կանաչ բարմ դաշտի վրա:

Ֆուրմանովի «Խռովություն» վեպի հերոսներից մեկը ասել է. «մեռիր ազնվացիոն մահով, այնպես, որ մահով անգամ օգուտ բերես։ Չէ՞ որ դա քո վերջին ուժերի մոբիլիզացումն է»։ Այդպիսի մահով են սերունդների հավատքը դարձել Զապաևն ու Շահումյանը, Լազոն ու Ղուկաս Ղուկասյանը, Գաստելլոն ու Հունանը, Մուսա Ջալիլն ու Միսակ Մանուշյանը։

«Կականչ» և այլ բանաստեղծություններում Սարյանը գաղափարական շեշտը դնում է մահվան հերոսականության, կյանքի զարգացմանը նպաստող նրա մոբիլիզացնող կողմի վրա։

Հերոսականության այդ տրադիցիաներն իրենց նոր պոետական արտահայտությունը գտան Հայրենական Մեծ պատերազմի տարիներին։ Ի պատասխան ֆաշիզմի ուխտադրուժ հարձակման, սովետական ժողովուրդը Կոմունիստական պարտիայի կոչով զինվորական համազգեստ հագավ և նետվեց ռազմադաշտ, հին սովորության համաձայն խեղդելու թշնամուն ռուսական տափաստաններում ու անտառներում։ Ռազմաշունչ երգերը թևածեցին տափաստանների վրա, ալեկոծեցին Նևայի խաղաղ ջրերը և Սև ծովի կապույտ անդորրությունը։ Ամեն ինչ ծառս եղավ թշնամու դեմ։ Թշնամուն հաղթելու հավատով վինվորը հրաժեշտի համբույր տվեց սիրած աղջկան, կայարաններում դանդաղ օրորվեցին արցունքներից ծանրացած սպիտակ թաշկինակները, մայրը արտասվեց նորածին մանկան օրորոցի վրա։ Ժողովրդական ցասումին խառնվեց մի ահեղ ու անողոք վիշտ, արկերի շառաչին ընկերացան հայրենաշունչ երգերը։ Զինվորների հետ մարտադաշտ եկավ նաև սովետական պոեզիան։ Պատերազմի առաջին իսկ օրերին Սարյանը գրում է «Խոսք բարի երթի» բանաստեղծությունը, որի մեջ պոետը բարի ճանապարհ է մաղթում կռվի գնացող ընկերներին, մաղթելով նրանց հաղթանակ ու բարի վերադարձ։

Իմ ընկերները գնացին կռվի,
Բարի ճանապարհ իմ ընկերներին.
Թող նրանց ճամփին հաղթանակ փռվի.
Հերոսի պսակ իմ ընկերներին:

Կջարդեն նրանք թշնամուն անարգ.
Դավթի կուռ քաջ՝ իմ ընկերներին,
Հայրենի Երկրի արեգակը պարզ
Զորավիգ լինի իմ ընկերներին:

Մեր սրտերն ամեն նրանց կրծքի տակ՝
Ջերմություն կտան իմ ընկերներին.
Կտան նրանց փառք, կտան հաղթանակ,
Բարի վերադարձ իմ ընկերներին:

Ճշմարիտ խոսքը, որքան էլ այն դառն լինի, միշտ էլ թեթևացնում է ազնիվ մարդու սիրտը, օգնում նրան սթափ նայել կյանքի երևույթներին, չկորցնել հեռանկարի պարզությունը, չմոլորվել առաջին իսկ կրած անհաջողությունից։ Ահա թե ինչու Սարյանը ոչինչ չի թաքցնում զինվորից։ Նրա երգերում կան տուն չվերադարձած սերմնացաններ, որդու կորուստը սգացող մայրեր, բայց ոչ երբեք հուսալքում, հոգու խուճապային թրթռումներ։ Պատերազմը մեծ փորձություն էր սովետական մարդկանց ոչ միայն ռազմական, այլև բարոյական ուժերի ու տոկունության։ Մայրական սերը, սիրած աղջկա կարոտը, հաղթանակի հավատը, մարդկային այդ վեհ ու ազնիվ զգացումները երբեք

չմանրացան արկերի տարափների տակ։ Սովետական մարդը հաստատուն մնաց բարոյական իր բարձունքին։ Ճիշտ է, ավելի կոշտացան նրա ձեռքերը. խորացան ճակատի կնճիռները, իսկ քունքերին իջավ վաղաժամ մի ճերմակություն, բայց առաջվա նման մաքուր էր նրա սիրտը, մարդկայնորեն պայծառ նրա կարոտը։

Գեղամ Սարյանի լիրիկական ձայնը բարձր հնչեց հատկապես նրա սիրո և հերոսության բալլադներում։ Նա փառաբանում է մարտիկին կրակ դարձած մաքուր սերը, խարազանում կարճատև հաճույքը սրբազան սպասումից վեր դասող քաղքենիներին, երդում հավատի հերոսականությունը։ Ահա թե ինչու մարտիկի մահով չի անհետանում այդ հավատը, այլ շարունակում է մի նոր պայծառությամբ վառվել սերունդների կրծքի տակ։ Մենք ընկանք, որպեսզի դուք ավելի լավ ապրեք. ահա այն կենսասիրությունը, որ յուրաքանչյուր զոհվող կտակում է իր մարտնչող ընկերոջը։

«Հայ ժողովուրդը հնագույն ազգերից մեկը լինելով, բազմիցս կանգնած է եղել ֆիզիկական լիակատար բնաջնջման, իր ազգային կուլտուրայի լիակատար կործանման եզրին։ Մեծ է նրա թշնամիների բանակը։ Դրա սկիզբը հասնում է մինչև դարավոր հնություն։ Գերմանական գավթիչները եզրափակում են հայկական վշտի, հայկական թախծի դառն տարեգրությունը»։ Այսպես է գրել «Պրավդան» 1943 թ. փետրվարի 27-ի առաջնորդող հոդվածում։ Վեց ամիս անց Գեղամ Սարյանը գրում է իր հռչակավոր «Դեպի կառափնարանը»։ Դա պատահական չէր ոչ թեմայի տրադիցիաների, ոչ էլ ժամանակի պահանջների տեսակետից։ 1915 թ. եղեռնը վշտի ու կայրույթի այրող տողեր է դարձել, դարձել պատմության անարդարությունը խարազանող տողեր, ինչպիսին են «Դժոխքի հանդեպը» ու «Հոգեհանգիստը» (Հ. Թումանյան), «Ցերեկվա ոսկե լույսերը մեռան», «Դառն ու տրտում» (Ավ. Իսահակյան), «Ողբ», «Խրդանք, եղբայրներ», «Եվ նորեն միշտ» (Վ. Թեքեյան), «Այնպես անխինդ էն հայրենիքում իմ արնաներկ», «Մշուշի միջից» (Վ. Տերյան)։ Այս երկերում հայ ժողովուրդն է պատկերված իր «հին ու նոր վերքերով», նորի ու հնի խորհրդավոր ճամփին մարմնավորված են «անարատ զոհի մեծ սրտի կսկիծը», բզկտված երազներ ու փետրաթափ հույսեր։

Ուրե՞զ է խոցում այնպես շուտ ու իսկ
Միտար մարդկային դաշույնը Քինոտ.
Ուրե՞զ է ճողին այնպես վիրավոր,
Եվ անպարտ երկիրն այնպես արյունոտ։

(Վ. Տերյան)

Ինչո՞ւ պատերազմի ամենաթեժ օրերին Սարյանն անհրաժեշտություն զգաց դիմելու այդ եղեռնին, որի կազմակերպումով թուրք բարբարոսները նպատակ էին դրել ֆիզիկապես ու հոգեպես բնաջնջել հայ ժողովրդին։ Բանն այն էր, որ պատերազմը վտանգի էր ենթարկել հայ ժողովրդի ոչ միայն այսօրը, այլև նրա դարավոր պատմությունը։ Իսկ պատմությունը միայն հերոսական պայքարի էջեր, ռազմական փառքի հիշողություններ չի թողել, նա հարուստ է նաև ազգային մեծ վշտերով, ականատես է եղել այնպիսի կորուստների, որոնք ժողովրդի ճակատագրական պահերին դառնում են հատուցման կանչեր, բորբոք պահելով նաև վրեժի ու ատելության կրակը։ Կոմիտասը, Վարուժանը և Սիամանթոն այդ շիկացած մորմոքի կրողներն են, որոնց վերա-

կենդանացումը բարոյական անհրաժեշտություն էր, երախտագիտական պարտքի արտահայտություն։ Թշնամին, իհարկե, շատ կուզենար, որ ժողովրդի հիշողությունից ջնջվեր նաև ժամանակին նրան հասցրած վիշտը, մանավանդ այնպիսի մի թշնամի, ինչպիսին գերմանական ֆաշիզմն է, որի նախորդների ձեռքերից դեռ չէր ջնջվել 1915 թ. զոհերի արյունը։

Սարյանն իր ասելիքը սկսում է բնության ընդգծված հակադրությունների նկարագրությամբ.

Ու ծովն էր ալեկոծ փրփրում իր ափերին,
Թմրել էր Պոլիսը փարթամ պարտեզներում
Եվ մինարեների նիրհուն կատարներին
Վերջալույսի գունատ շողերն էին մարում:

Պոլիսը, որի յաթաղանից դեռ կաթկթում էր հայ անմեղ կանանց ու երեխաների արյունը, «թմրել էր փարթամ պարտեզներում»։ Սրեսմն ինչպիսի վայրենի սառնասրտությամբ է նա սրի քաշել մի ամբողջ ժողովրդի, փորձելով վերջակետ դնել նրա պատմությանը։ Առաջին իսկ տողերից Սարյանը ընթերցողին համակում է ատելությամբ դահիճների նկատմամբ, խորապես գիտակցել է տալիս նրան իր նախնիների խոշտանգված սրտերի վեհությունը, ստիպում վերապրել նրանց խոցված, բայց ոչ երբեք ընկճված հպարտության զգացումը։

Այնտեղ էին նրանք... այդ չարագույժ նավում,
Հայոց ճնարների վարպետները բոլոր,
Հայոց պայծառ մտքի աստղերն էին մարում
Այդ ահավոր ժամին, խավարի դեմ անզոր:

Այնտեղ էին նրանք... Վարուժանը խոհուն,
Սիամանթոն՝ հայացքն ուղղած դեպի Երեր,
Եվ ո՞վ գիտե արդյոք, արդյոք ի՞նչ էր խորհում
Կոմիտասը՝ հոգում պահած բազում երգեր...

Այդ օրհասական պահին նրանք դարձյալ շարունակում են մտածել հարազատ ժողովրդի հետագա ճակատագրի մասին։ Կոմիտասի աչքերի առջև փռվում են հայրենի ափերը, Արագածի զմրուխտ լանջերը, Սևանը, այն ամենը, ինչ ապրում է գեղջուկի երգերում, ինչի համար ապրել է ինքը։

«Դեպի կառափնարանի» մասին նույնպես կարելի է ասել. արտահայտության ինչպիսի պարզություն, ինչպիսի բնավորություն, տողերի ինչպիսի ազատություն։ Զգում ես, որ ամբողջ բանաստեղծությունը մի ակնթարթում թղթին է հեղվել ինքն իրեն, որպես արցունքի հեղեղ, որպես տաք արյան շիթ, որ թափվում է վիրակապից հենց նոր ազատված վերքից, Նռագած արցունք և տաք արյան շիթ. անհնար է ավելին ասել այս պոեմի մասին։

Եվ այսպես, մի կողմից Նաիրի Զարյանն իր «Զայն հայրենականում» կոչ է անում զինվորներին՝ հիշել մեր նախնիներին և հարվածել թշնամուն, մյուս կողմից Սարյանը ցույց է տալիս կառափնարանի ճանապարհը բռնած նախնիներին։ Զարյանի հռետորական առողջ շեշտին միանում է Սարյանի խոհականությունը, ստեղծելով մտքերի ու զգացմունքների մի ակտիվ ներդաշնակություն։ Պոեմի հայրենասիրական ոգուն բնավ չի խանգարում հայոց պատարագի հուզիչ «տեր ողորմյան», որ վերջին անգամ շշնջում էին Կոմիտասի պաղ շուրթերը։ Մռայլ դամբարան դարձած նավում վարդապետը չէր կարող «Քելե-քելե» երգել, ոչ էլ վերհիշել «Խնկի ծառը»։ Վերջապես կարևորը

դա չէ, այլ այն, որ Կոմիտասը, Վարուժանն ու Սիամանթոն զգացին ծովափին հառաչող բազմության սերը, տեսան այն հուղարկավորներին, որոնք եկել էին հավերժացնելու և փրկելու մեծ նահատակների հիշատակը։ Եվ հանդիսավոր տխուր այդ պատմությունը Սարյանն ավարտում է՝ վերստին դիմելով հակադրության հնարին.

Իսկ երկնքում լուսնի մահիկն ամպասող
Սահելով դուրս նայեց ուրախ ու տիրաբար.
Ինչպես Վիլհելմ կայսեր հայացքի տակ պարող
Ծախված զեղեցկուհու ժպտուն ատամնաշար...

Ամեն ինչ արդեն ասված է նաև կայսերական Գերմանիայի մասին, որի անմիջական աջակցությամբ է կազմակերպվել հայ ժողովրդի մի ստվար հատվածի բնաջնջումը, այն Գերմանիայի, որ տարիներ հետո ներխուժել է մեր հողը՝ այս անգամ արդեն բնաջնջման ավելի ահավոր նպատակներով։

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո էլ Սարյանը շարունակեց պատկերել սովետական զինվորի ռազմական սխրագործությունները։ Սկսվեց ապրածի ու զգացածի գեղարվեստական մարմնավորման մի բարդ ու դժվարին պրոցես։ Պետք էր կարողանալ ընդհանուր խնդության մեջ չմոռանալ զոհվածներին, այրիացած դեռատի կնոջ արցունքները, հարգել այն վերքերը, որ մարդիկ ստացել են հաղթանակի ճանապարհին։

Այդ տեսանկյունից դիտելով Սարյանի պոեզիան, կարելի է ասել, որ նա մարդու մեծ սրտի երգիչ է։ Մարդու այդ սերն էլ նրան դարձրել է ժողովուրդների բարեկամության խանդավառ երգիչ, աշխարհի բոլոր անկյուններում ազնիվ ու բարի սրտեր տեսնող։

Սարյանը սովետահայ պոեզիայի մարդասիրական, ինտերնացիոնալիստական տրադիցիաների հիմնադիրներից մեկն է։ Նա այդպիսին չէր դառնա, եթե անձնվիրաբար չսիրեր իր հայրենիքը, իր ժողովրդին։ Այդ «իր»-ով հարուստ սիրտը միայն կարող է խորն ու անկեղծորեն սիրել մյուս ժողովուրդներին։ Առանց ազգային հպարտության խոր պահպանման, ամուր, անկաշառ բարեկամություն լինել չի կարող։ Ժողովուրդների լենինյան բարեկամությունը խարսխված է փոխադարձ սիրո, հարգանքի և համընդհանուր իդեալների վրա։ Ահա թե ինչու հայրենասեր լինելով հանդերձ մեզ հարազատ է թվում ամբողջ երկրագունդը, և աշխարհում ամենից շատ մենք ենք ցանկանում, որ մարդիկ ապրեն երջանիկ ու խաղաղ։

Այդ վեհ զգացումն է արտահայտել Սարյանը Ռուսաստանին, Վրաստանին, Ադրբեջանին, Ուկրաինային նվիրված իր բազմաթիվ երգերում։ Այդ զգացումն է նրան իրավունք տվել ասելու

Ուղիաբար եմ հիշում մայրությունը քո հողի
Անձայրածիր դաշտերիդ բերրիությունն անարատ.
Համբուրում եմ իմ հեռվից ճակատը քո հաղթողի.
Ուկրաինա սիրելի, Ուկրաինա հարազատ:

Մինչև հիմա մենք խոսում էինք այն մասին, թե Սարյանի պոեզիայում ինչպիսի արտացոլում են գտել մեր հայրենիքի երեկն ու այսօրը։ Այդ երկու իրականությունից բացի, ինչպես նշել է Մաքսիմ Գորկին, կա նաև երրորդ իրականությունը՝ ապագան, որը նույնպես պետք է լինի գրողի մշտական

մտահոգության առարկան։ Կոմունիստական այդ ապագայի երգիչը դարձավ նաև Գեղամ Սարյանը, երբ տեսավ, խորապես համոզվեց, որ «անսահման նվիրվածությունը ռևոլյուցիային և ռևոլյուցիոն քարոզով ժողովրդին դիմելը չի կորչում նույնիսկ այն ժամանակ, երբ ամբողջ տասնամյակներ են բաժանում ցանքը՝ հնձից» (Վ. Ի. Լենին)։

Սարյանը ոգեշնչված պատկերեց այդ ցանքը՝ ներկան, դրա հաղթական երգի մեջ զգալով նաև հունձը՝ ապագան, այս երրորդ իրականությունը, որի մասին Կոմունիստական պարտիայի նոր ծրագրում ասված է. «Կոմունիզմը մարդկության և մարդկային անհատականության բարձրագույն ծաղկումն է»։ Իսկ ծաղկումն առանց պայքարի, առանց դժվարությունների հաղթահարման չի լինում։ Սարյանի երգած կոմունիզմը թեթև քայլերով չի գալու, այլ փրփրաբաշ ջրերի վրայով ու կովի շառաչով, գալու է արտերի վրայով ու արտեր նվաճած։ Այդ ճանապարհին հաղթանակներ են լինելու, հնչելու են հագար շեփորներ, երջանկություններ դառնալու է մարդու կենցաղի անբաժանելի մի մասը, բայց և կարոտներ են լինելու, տխրության պահեր, անհանգիստ սպասումներ.

Կոմունիզմը կգա արտերի,
Արտերի վրայով նգա նա...

Իր հանճարի ուժով Լենինը հարստացրեց Մարքսի ուսմունքը կոմունիզմի մասին։ Առաջնորդի այդ համապարփակ, ամբողջ դարաշրջաններ ընդգրկող մտքի հզորությունը ժամանակակիցներին խոր հիացմունք է պատճառել։ «Նա, ինչպես ոչ ոք նրանից առաջ,—իր հուշերում գրել է Մաքսիմ Գորկին,—կարողանում է կանխատեսել այն, ինչ լինելու է։ Ինձ թվում է, որ նա կարողանում է կատարել այդ, որովհետև այդ մեծ հոգու կիսով նա ապրում է գալիքի մեջ։ Նրա երկաթե, բայց ճկուն տրամաբանությունը ցույց է տալիս նրան հեռավոր ապագան բոլորովին կոնկրետ, իրական ձևերի մեջ։ Իմ կարծիքով, հենց դրանով է բացատրվում նրա զարմանալի անսասանությունը իրականության հանդեպ, որը երբեք չէր շփոթեցնում նրան, որքան էլ այն դժվարին ու բարդ լիներ»։ Լենինի մասին գրած իր երգերում Գեղամ Սարյանը ընդգծել է հենց այդ գեղեցիկ մարդկայինը։ Առաջնորդի մեծությունն այն է, որ նա խորհեց ու մտածեց ժողովրդի հետ, պատմությունն իջեցրեց անհատների ուսերից և տվեց նրա իսկական տիրոջը՝ աշխատավոր մարդուն։ Միայն այդ ճանապարհով հնարավոր էր ղեկավարել ժամանակի ընթացքը, տեսնել նրա ներկան, թափանցել գալիքի հեռուները.

Ես գիտեմ, որ և մեռած ես, և ապրում ես դու նիմա,
Եվ Քո ոգին միշտ կմնա ժամանակի պես անման.
Դու մարդկության երջանկության հզաշունչ մարգարե,
Թափանցելիր մամով գալիք հազար տարի ու դարեր։

Իր նոր ծրագրում Կոմունիստական պարտիան նշում է, որ սովետական բարոյականությունը իր մեջ է առել համամարդկային բարոյականության լավագույն նորմերը, որոնք մշակվել են ժողովուրդների կողմից դարերի ընթացքում, սոցիալական ճնշման, անհատի ազատության ոտնահարման դեմ մղվող համառ ու տևական կռիվներում։ Ժառանգածի այս մեծությունն արդեն վկայում է, թե մարդասիրական ինչպիսի ազնիվ սկզբունքներով, իդեալների ինչ-

պիսի պայծառությամբ է աշխարհի, ժողովուրդների բախտով մտահոգված Լենինի պարտիայի ռևոլյուցիոն բարոյականությունը։

Միմիայն կոմունիստների պարտիան է, որ ահա մեկ դարից ավելի է, ինչ արիաբար ծառայում է ժողովուրդներին, հավատարիմ է իր տված բոլոր երդումներին, հզոր է իր խաղաղասիրությամբ և հաղթող՝ խաղաղության համար մղվող բոլոր ճակատամարտերում։ Պարտիայի նոր ծրագրի մեջ իր ցայտուն արտահայտությունն է գտել լենինյան հոգատարությունը մարդու նկատմամբ։ Լենինն առաջինն էր, որ մարդուն համարեց պետական ամենաթանկ սեփականություն, պետական բարիք։ «Գիտե՞ք ինչ,—կշտամբում էր նա իր աշխատակիցներին,—ձեզ հարկավոր է պատասխանատվության ենթարկել պետական բարիքի նկատմամբ ձեր ցուցաբերած անփույթ վերաբերմունքի համար։ Այո՛, այո՛, պատասխանատվությա՛ն։ Մեր մարդիկ պետական ամենաթանկ սեփականությունն են»։ Այս մարդասիրությունը բխում է առաջնորդի ոգու վեհությունից ու հարստությունից, նրա իդեալների պայծառությունից, այն անխորտակելի համոզմունքից, որ մարդիկ են կերտում պատմությունը, հետևապես նրանք էլ արժանի են ամենաբարձր սիրուն ու հարգանքին։

Գեղամ Սարյանը ցույց է տվել այդ մարդասիրության նաև ինտերնացիոնալիստական ոգին։ Լենինի համար չկան ժողովուրդներն իրարից բաժանող հոգևոր ու բարոյական սահմանագծեր։ Ահա թե ինչու յուրաքանչյուր աշխատավոր մարդ, երկրագնդի որ մասում էլ ապրելիս լինի, իր սրտի ամենասրբազան անկյունում պահում է Լենինին, որպեսզի սիրտը առողջ բաբախի, չունենա վրիպող զարկեր, չշեղվի ընտրած ճիշտ ճանապարհից։

Երկրներից հեռու, ծայրերից աշխարհի,
Մարմարեղեն դամբան, քեզ այցի ենք գալիս.
Բայց մի՞թե դու ես, որ այն մեծ ղեկավարի
Կարոտանքը սիրած բյուրերին ես տալիս:

Մի՞թե քո մեջ է լռել այն մարդը վիթխարի,
Որ աշխարհը դրեց մի նոր ճամփի վրա.
—Այցելունե՛ր, երկրի ու ամբողջ աշխարհի
Բյուր սրտերի մեջ է Դամբարանը նրա:

Որքան ավելի ես խորանում Սարյանի տողերի մեջ, այնքան պարզ ու հստակ է դառնում նաև մի այլ ճշմարտություն։ Անհատի անմահությունը դամբարանով չի որոշվում, այլ նրանով, թե իր մահից հետո ինչ դեր է խաղում նա ժողովուրդների կյանքում և ինչ հիշատակ է թողել։

Սարյանի լենինյան տողերում առաջնորդը մեկնում է պատերազմի դաշտ և զինվորների հետ հաղթանակած տուն վերադառնում, օրը նրանով է լուսանում, երկիրը վեր խոյանում նրա մտքի վսեմ թռիչքներով, ամեն ինչ առաջվա նման ընթանում է Լենինի ուղիով, նրա ղեկավարությամբ ու առաջնորդությամբ։

Չենք ընկճվել մենք քո մահով,
Թեև միշտ ցավ ենք զգացել,
Քո դամբանին հաճախ մտքով
Պատվո պահակ ենք մնացել.
Եվ ամեն օր առավոտյան,
Երբ մենք գործի ենք գնացել,
Մեր տխրության ու խնդության
Քեզ մասնակից ենք զգացել:

Սարյանի տողերի ներքին իմաստն այն է, որ մարդ իր անմահությունը պետք է ձեռք բերի կենդանության օրոք, որ միայն ազնիվ, հարուստ, բեղմնավոր կյանքն է արժանի ժողովրդի սիրուն ու հարգանքին։

Հայ ժողովուրդը մի առանձին երախտագիտությամբ է հիշում Լենինին, որի փրկարար ձեռքը իջավ նաև տառապած, անարդարության դարավոր ծանրությունից կոշտացած նրա ուսերին։ Եվ այն քարը, որ «վիշտ ու կարոտ է ցողում» դամբարանի վրա, հայ ժողովուրդն ուղարկել է որպես հավերժական պատգամավորի, ուղարկել է, որպեսզի նա զգա իր ազատագրած փոքր ժողովրդի մեծ սրտի բաբախումը, տեսնի իր կյանքի կենդանի բնթացքը նաև Հայաստանում։

Այդ իմ երկրի քարե է, այն Դամբանի վրա,
Քարաշարում կեցած պատգամավոր լուռ,
Ու սառն է այնտեղ՝ հայացքի մեջ նրա
Երկրիս երախտապարտ համակրանքը անլուր։

Իրոք Սարյանը շնչել է բարձրացող ամեն քարի հետ, ապրել օրերի վազքում, խանդավառվել, խանդավառել ուրիշներին։ Այդպիսին է նա նաև այսօր։ Խոհուն, կենսասեր, բարությամբ լի։ Ու կարծես նրա մասին է ասված, թե աշխարհ եկավ կյանք սիրելու, սեր թողնելու աշխարհին։

ТВОРЧЕСКИЙ ПУТЬ ГЕГАМА САРЯНА

В. М. МНАЦАКАНЯН

(Резюме)

Творчество Гегама Саряна — значительное явление в армянской советской литературе. Продолжая богатые поэтические традиции Туманяна, Исаакяна и Теряна, Сарян сказал свое самобытное поэтическое слово о времени и о себе. Поэзия Саряна глубоко отражает думы и чаяния советского человека, его гордость за свою социалистическую родину и его моральную чистоту. Вслед за поэтом революции Егише Чаренцем Сарян «тысячью труб» славил новую жизнь, вдохновляясь ее твердой, могучей поступью. Герой лирики Саряна — это человек, создающий прекрасное, которое рождается в труде. Страстная влюбленность в жизнь, в советскую новь — характерная черта лирической поэзии Саряна. Народ высоко оценил поэзию Саряна, отвел ей достойное место в армянской советской литературе, которую поэт продолжает обогащать своими произведениями.